



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«21» 08 2018թ.

No 06/3-3/48880-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ
Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 31.07.2018թ.
NՊ-44 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերը հանդիսանում է ինքնազբաղված անձ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական վճարներ են կատարում ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից, ովքեր նույն օրենքով սահմանված կարգով ներկայացրել են կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում կամ նույն մասի 1-ին կետի հիման վրա երբևիցե կատարել են սոցիալական վճար:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

- ինքնազբաղված անձանց համար սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը հանդիսանում է որպես ինքնազբաղված անձ ստացված եկամուտները,

- որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտներից, բոլոր դեպքերում, սոցիալական վճարը կատարվում է 5 տոկոս դրույքաչափով, անկախ եկամտի չափից:

Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ անձը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից սոցիալական վճար կատարում է կամավորության սկզբունքով, օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով (ինքնուրույն հաշվարկում և փոխանցում է սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ ՀՀ հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում):

Հաշվի առնելով վերոնշյալը, օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված բոլոր դեպքերում, անձը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից սոցիալական վճարը կատարում է կամավորության սկզբունքով, ինչը նշանակում է, որ ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սոցիալական վճար կատարելը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

8/22/2018

X 

VERIFIED OCSP 8/22/2018 17:29:13 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՄՍԸՎ հարկերի և պարտադիր վճարների
Մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. (060)544779

